

**5.4. 2009թ. օգոստոս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2009թ. օգոստոսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Օգոստոսին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների, Ալավերդի, Գյումրի և Ծաղկաձոր քաղաքների պասիվ նմուշառման 56 դիտակետերի, Ամբերդ գյուղում տեղադրված ավտոմատ կայանի միջոցով:

Մթնոլորտային օդի 3306 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, գետնամերձ օզոնի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի և ածխածնի մոնօքսիդի պարունակությունները:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների, 2009թ. օգոստոս**

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
Երևան	5	1653	-	-
Արարատ	1	78	-	-
Ալավերդի	2	100	18	173
Վանաձոր	3	832	-	-
Գյումրի	1	25	24	227
Հրազդան	1	78	-	-
Ծաղկաձոր	-	-	14	140
<b>Ընդամենը</b>	<b>13</b>	<b>2766</b>	<b>56</b>	<b>540</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում հուլիս ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություն չի դիտվել:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2009թ. օգոստոս**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.63	0.07	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.11	0.03	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.333	0.059	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.22	0.03	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.107	0.072	0.16	0.03
Բենզոլ	0.146	0.016	1.5	0.1
Տոլուոլ	0.034	0.001	0.6	0.6
Քսիլոլ	0.629	0.030	0.2	0.2
Ածխածնի մոնօքսիդ	-	0.76	5	3

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Գյումրի քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.2 անգամ:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում հուլիս ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2009թ. օգոստոս**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.29	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.46	0.11	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.271	0.038	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.48	0.04	0.40	0.06

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 7.3 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 4.7 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2.7 անգամ:

Ալավերդի քաղաքի դիտակայաններում դիտարկումներ կատարվել են միայն մթնոլորտային օդում փոշու պարունակության որոշման համար: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

Ալավերդի քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.0 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.1 անգամ:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.6 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 3.3 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.4 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 22.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.7 անգամ:

Օգոստոս ամսին ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով Ամբերդ գյուղում ավտոտնատ եղանակով վերցվել է օդի 31 փորձանմուշ, որոնցում որոշվել է ազոտի երկօքսիդի պարունակությունը: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 15.4 անգամ:

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** 2009թ. օգոստոսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 38 գետերի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի և Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 111 դիտակետերում: Վերցված 120 փորձանմուշներում որոշվել է 23-29-ական ցուցանիշ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2009թ. օգոստոս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի հասցե	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ >6.0 մգ/դմ <sup>3</sup> )	թեֆոլ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	թժֆոլ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	-	-	0.058	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	-	-	0.028	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	-	0.093	0.969	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	-	-	0.093	-	264.8
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	-	-	-	0.068	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	-	0.052	-	-
Տաշիր	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.078	0.433	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	-	533.5
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	5.09	-	-	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	5.47	-	60	-	-	-
	17	ք.Բջևանից 1 կմ վերև	4.87	-	-	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	5.07	-	-	-	-	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	5.42	-	-	-	-	-
	20	Գետաբերան	3.97	-	40	-	-	-
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	-	0.038	-	-
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	-	0.087	-	-
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.082	-	137.5
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	-	-	-	141.1
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	-	-	-	-	140.2
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	-	0.027	-	293.0
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	-	0.112	-	220.3
	42	Ռանչյար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.059	-	175.3
Քասախ	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	-	-	0.056	2.948	-
	47	Գետաբերան	-	-	-	0.057	-	-
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	-	0.038	-	-
Հրազդան	55	Դարբնիկ գյուղի մոտ	5.21	6.8	-	0.295	26.415	-
	56	Գետաբերան	-	-	-	0.126	2.495	158.0
Գետառ	59	Գետաբերան	-	-	-	0.291	3.785	-
Մասրիկ	63	Գետաբերան	-	-	-	0.055	-	-
Վարդենիս	70	Գետաբերան	-	-	-	0.049	-	-
Մեղրիգետ	90	Գետաբերան	-	-	-	-	0.505	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	-	0.108	1.021	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	-	0.047	0.0947	142.1
Արծվանիկ	96	Գետաբերան	5.60	-	-	0.054	-	459.6
Որոտան	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	-	0.060	-	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5.37	-	-	0.180	1.101	-
Ամուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	5.60	-	-	0.029	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	-	0.224	0.702	114.0